Պետրոս Դուրյան

Հծծյունք

Երբոր վարդի փունջք հայեցի՝
Ծրլան տժգույն ճակտիդ վերև,
Խոնարհեցիր աչերդ արև,
Քեզ այն օրեն ես սիրեցի:

Թերթեր հուզող սյուքի մը պես՝
Թրռար սրտիս ծալքերն թոթվել,
Քընարի մը կըրակե թել՝
Քեզ ձըգեցիր դու աղիքես:

Արդ կը փախչիս ինձմե սյուքի
Պես, շուքըդ տաս լոկ քընարիս,
Գիսաստղի պես հեռուն կ՚նագիս՝
Հովին տըված մազերդ ոսկի:

Երբ աստղալույց գիշեր է զով,
Շրջագայիս Պաղլար Պաշի,
Գիտե՞ս թե սիրտս ո՞րչափ մաշի՝
Շրջազգեստիդ լոկ շրշյունով:

Գա սյուքն ազատ քեզ այցելու,
Նային քեզի աստղերն ազատ,
Ըստվերին մեջ մինակ ու զատ՝

Ես կը դողամ քեզ մոտելու:

Ո՜հ, թող երթա՛ սյուքն իր ծաղկոց,
Նայի՛ն աստեղք թող յՕվկեան,
Եվ թող մեկ մ՚ե՛ս ալ թալկանա՛մ
Քու նայվածքիդ մեջ կրակուբոց:

Մահիկն երբոր շառագունած՝
Իջնե լեռնեն ի հորիզոն,
Ալ կ՚անհետիս, չ՚ես շրջիր հոն՝
Կագին, հովին, աստղին դիմաց:

Գերեզմաննոցին ցուրտ ծառեր
Կը փըսփըսան մեռելոց հետ,
Շրջազգեստիդ շրշյունին գեթ
Ինձ արձագանք մահահրավեր:

Ընվաղած են լույս ու ժըխոր,
Դադրած շրշյունք կանանց՝ անմռունչ
Արդ կը թաղվին համբույր, մրմունջ՝
Աստեղազարդ անդունդին խոր:

Շրջազգեստիդ խշրտուքն հար
Կը փըսփըսա դեռ ականջիս,
Հեծկլտալով իջնե հոգիս
Արտոսրալից անդունդ մ՚ի վար…:

1871